

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԹԻՎ 2

2021 թվականի փետրվարի 11-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 12^ա դասարանի ծնողական ժողովը:

Ժողովին մասնակցում էին բոլոր ծնողները, դասղեկ Գոհար Ղազարյանը և տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Զոյա Գևորգյանը:

Օրակարգում՝

1. 2020-2021 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի արդյունքների ամփոփում:
2. 2-րդ կիսամյակի խնդիրներն ու անելիքները և COVID-19 գահավարակի և պայմաններում կիրառվող անհրաժեշտ կանոնների պահպանումը դպրոցական դասընթացում:
3. Ընթացիկ հարցեր:

1. Լսեցին. - « 2020-2021 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի արդյունքների ամփոփում» հարցը:

Ժողովն սկսվեց՝ մեկ րոպե լռությամբ հարգելով 44-օրյա պատերազմում զոհված հերոսների հիշատակը հարգելով:

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ ելույթով հանդես եկավ դասղեկ Գոհար Ղազարյանը: Նա հանգամանալից ներկայացրեց 12-րդ^ա դասարանի 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակի արդյունքները:

«Ինչպես գիտեք, այս տարի ամբողջ հանրապետությունով մեկ ուսումնական տարին մեկնարկեց սեպտեմբերի 14-ին՝ առաջին դասարացիների համար մար, իսկ 2-12 դասարանցիների համար՝ սեպտեմբերի 15-ին՝ կապված կորոնանավիրուսի՝ համավարակի տարածման, արտակարգ դրության հաստատման և դրանց հետ կապված մի շարք որոշումների իրականացման ժամանակաշրջանի հետ,- նշեց նա:

Մեր հայրենիքի խաղաղ կյանքը խաթարվեց սեպտեմբերի 27-ին՝ կիրակի օրը: Աղբյեջանը, զինված ժամանակակից տեխնիկայով, Թուրքիայի հովանու տակ վարձու ահաբեկիչներից կազմված զինյալներով տարբեր ուղղություններով հարձակվեց Արցախի Հանրապետության վրա: Դա պատերազմ էր ոչ միայն Արցախի դեմ, այլև Հայաստանի դեմ: 44 օր տևած այդ քայքայիչ ու ավերիչ պատերազմը մեզնից խլեց հազարավոր հայորդիների կյանք: Հայրենի հողի պաշտպանության համար հերոսաբար մարտիրոսվեցին արցախցի ու հայաստանցի 18-20 տարեկան զինվորներ ու կամավորներ:

Պատերազմը մտավ նաև Գեղաշեն ու խլեց 6 երիտասարդ տղաների կյանք: Ցավոք, այս պատերազմն ավարտվեց նոյեմբերի 9-ին, խայտառակ պարտությամբ՝ մեր երկրի կապիտուլյացիայով: Մեր ազատության համար այդքան արյուն թափած, 5000 հազար զոհ ու վիրավոր ունեցող երկիրը կորցրեց 1988-ից մինչև 1994 թվականների ընթացքում ազատագրված մեր հողերը և, դեռ ավելին, թշնամուն «նվիրաբերվեցին» հայի Շուշին, Դադիվանքը, շեն ու բարեբեր Արցախ աշխարհի՝ արյամբ նվաճված խաղաղությունն ու ազատությունը: Իսկ մենք՝ հայերս, գլխիկոր, ապշա-

հար ու վաղվա նկատմամբ հավատը կորցրած, շարունակում ենք ապրել, աշխատել և կրթել մի սերունդ, որի եղբայրը, հայրն ու հարազատը դեռ անշիքիմ ու անթաղ կամ թշնամու կողմից գերված, չի գտնում այն հարցի պատասխանը, թե ինչու և ինչի համար տվեցինք այսքան զոհ ու կորուստ, երբ պիտի տայինք մեր ունեցածը՝ ամենաթանկը հայրենիքի համար ու պարտվեինք մինչև այսօր մեր պատմության գրքերում չգրված օրենքով և փակեինք մեր հայրենասիրության ամենահերոսական էջերը: Այս սերունդը մեզ չի ներելու՝ իրեն թողած այս դառն ու անպատիվ ժառանգության համար:

Հիմա մեզնից ավելին է պահանջվում է, և մենք պարտավոր ենք սրանից հետո դաստիարակել այնպիսի սերունդ, որը կարողանա թշնամու հետ խոսել իր իսկ լեզվով, ապագայում հաղթողի և ոչ թե պարտվողի լեզվով:

Ահա այսպիսի իրավիճակում մենք կարողացանք շարունակել դասերը՝ հոկտեմբերի 30-ից անցնելով հեռավար պարապմունքների՝ պահելով աշակերտի խաղաղության համար պայքարելու և ազատ ապրելու ոգին, պատգամելով ապրել, սովորել ու պայքարել նաև մեր Եռաբլուրում հավերժացող տղաների փոխարեն, նրանց դեռ չսկսված, բայց արդեն խաչված կյանքի փոխարեն:

Կապված պատերազմական իրավիճակի, աշխարհում մոլեգնող և օր օրի արագ տարածվող կորոնավիրուսի հետ, էլնելով երկրում տիրող ծանր իրավիճակից, մենք փորձեցինք նոր ձևով, ժամանակի թելադրանքով սկսել կրթության մերօրյա դասավանդումը՝ աշակերտների ոգեկոչելով մեկ ուրիշ տեսակ պայքարի, միայն սովորելով մղել գիտակցական պայքար ու թշնամուն հաղթել մեր ունեցած գիտելիք-գեներով:

Նոյեմբերի 30-ից վերսկսվեցին խմբերով պարապմունքները, և կիսամյակն ամփոփվեց դեկտեմբերի 28-ին 12-րդցիների, իսկ 1-11 դասարանների համար հունվարի 23-ին: Եվ համապատասխանաբար 12-րդ դասարանի աշակերտները 2-րդ կիսամյակն սկսեցին հունվարի 11-ին, իսկ 1-11-րդ դասարանների աշակերտները՝ հունվարի 25-ին:

1-ին կիսամյակը տևեց 13 ուսումնական շաբաթ՝ սեպտեմբերի 14-ից մինչև դեկտեմբերի 28-ը: Ամեն օր՝ առավոտյան՝ դպրոց մտնելուց առաջ բոլոր աշակերտները ջերմաչափվեցին, ստուգվեցին նրանց կողմից դիմակների կրումը և ախտահանիչ նյութերի օգտագործումը, իրարից 1,5-2 մ հեռավորություն պահպանելը, և դա վերահսկվեց բոլոր օրերի ընթացքում:

12-րդ դասարանցիները, լինելով ավարտական դասարանի աշակերտներ, պարտավոր էին այս վերջին ուստարում լինել ավելի խելամիտ ու հավասարակշռված, չունենային անհարգելի ուշացումներ ու բացակայություններ, դասերին միշտ ներկայանային պատրաստ վիճակում, որովհետև շատ կարևոր էին 1-ին կիսամյակի գնահատականները: Նրանք պիտի ավելի լրջորեն պատրաստվեին թեմատիկ ու կիսամյակային գրավոր աշխատանքներին և քննություններին:

1-ի կիսամյակում դասարանում սովորել են 18 աշակերտներ: Ունեցել ենք 1 գերազանցիկ (Վարդանյան Մայրանուշ) և 5 հարվածային աշակերտներ (Առաքելյան Մարիամ, Եղիազարյան Քրիստինե, Խաչատրյան Սուսաննա Սարգսի, Մնացականյան Մարիամ, Սարգսյան Գեղամ): Առաջադիմությունը կազմել է 100%, իսկ որակական ցուցանիշը՝ 33,3%:

Ե՛վ առկա, և՛ առցանց պարապմունքների ժամանակ հիմնական բացակայողները եղել են դասարանի բոլոր տղաները, բացի Սարգսյան Գեղամից: Հիմա էլ, երբ սկսվել է երկրորդ ամենապատասխանատու կիսամյակը, նրանք կամ դպրոց չեն

գալիս, կամ էլ ներկայանում են առանց գիրք ու տետրի, անպատրաստ վիճակում: Այս հարցում ամենից շատ մեղավոր են ծնողները: Շաբաթվա ընթացքում դասի են գալիս 3 օր և զլանում են այդ օրերին պատրաստ ներկայանալ դպրոց: Հուսով ենք կվերանայեն իրենց վարքագիծը և ուսումնական տարվա վերջին ամիսներին իրենց կպահեն աշակերտի նման ու կդրսևորեն շրջանավարտին վայել կեցվածք, եղրափակեց դասդեկը:

Որոշեցին.- Ավելի հետևողական լինել և պահանջել աշակերտներից ավարտական դասարանի վերջին ամիսներին էլ ավելի լավ սովորել, որպեսզի կարողանան վերանայել իրենց գնահատականները և հաջողությամբ հանձնեն պետական ու միասնական քննությունները:

2. Լսեցին.- «2-րդ կիսամյակի խնդիրներն ու անելիքները և COVID-19 գահավարակի պայմաններում կիրառվող անհրաժեշտ կանոնների պահպանումը դպրոցական դասընթացում» հարցը: Այդ հարցի շուրջ եղան ընդհանուր ելույթներ ու քննարկումներ: Քանի դեռ շարունակվում են արտակարգ դրության պայմաններում մեր հանրապետությունում ընդունված օրենքների կիրառումը՝ որոշ մեղմացված կետերով, ապա մենք պարտավոր ենք հետևել դրանց խիստ կիրառմանը, որպեսզի կարողանանք ավելի պատրաստ ու մտածված քայլերով հաղթահարել մեզ պատուհասած բոլոր դժվարությունները:

Ելույթ ունեցողները հիմնականում անդրադարձան այս օրերին երկրում տիրող բարդ իրավիճակին (հետպատերազմյան ծանր դրություն և քաղաքական խմորումներ) և նշեցին, որ պետք է հենց այս պայմաններում աշակերտներին հեռու պահել ամեն ինչից և նրանց ուշադրությունը կենտրոնացնել սովորելու վրա, որովհետև ժամանակը էլ չի ներելու բացթողումների համար: Այս գործում իր անելիքներն ունի նաև ծնողական խորհուրդը:

Որոշեցին.- Ավելի ակտիվացնել աշխատանքները, պատասխանատվությամբ ու հետևողականորեն կատարել հանձնարարությունները, օգնել դասղեկին ու դպրոցին՝ ուսման որակն ու կարգապահությունը բարձր հիմքերի վրա դնելու համար:

3. Ժողովի ընթացքում քննարկվեցին ընթացիկ հարցեր՝ կապված դիմորդների փաստաթղթերի, անձնագրերի ստացման, դասղեկի ժամին դասարանում կազմակերպվող միջոցառումների և այլ թեմաների վերաբերյալ:

Ժողովի նախագահ՝
Քարտուղար՝

Վրնիս
Ասմ

Թագուհի Մկրտչյան
Տաթևիկ Բաբայան